

## ՀՀ ՊԱՐԵՆԱՅԻՆ ԱՊՐԱՆՔՆԵՐԻ ԱՐՏԱՔԻՆ ԱՌԵՎՏՈՒՐԸ ԵՎ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀԵՌԱՆԿԱՐՆԵՐԸ<sup>1</sup>

Լևոն ԽԱՉԱՏՐՅԱՆ  
տնտեսագիտության թեկնածու

Բանալի բառեր. արտահանում, ներմուծում, պարեն, առևտուր

Ցանկացած երկրի տնտեսության զարգացման կարևորագույն լուծոն-տիվը համարվում է արտաքին ակտուրը: Այսօր համաշխարհային տնտեսու-թյունում զարգացած, ինչպես նաև զարգացող երկրների արտաքին քաղաքա-կանության մեջ որպես ուղենիշ է ընտրված ապրանքների և ծառայություն-ների արտահանման զարգացումը, որը միաժամանակ կոչված է լուծել երկրների առջև ծառայած սոցիալ-տնտեսական մի շարք հիմնախնդիրներ, ինչը կնպաստի տվյալ երկրի համախառն ներքին արդյունքի աճի ապահով-մանը: Հայաստանի Հանրապետությունը, որպես համաշխարհային տնտեսու-թյան մի մաս, ներգրավված է արտաքին առևտրում և ներկայիս փոփոխվող տնտեսաքաղաքական գործընթացում տնտեսապես բավականին խոցելի է, քանի որ արտաքին առևտրի հաշվեկշիռը բացասական է հատկապես պա-րենի մասով, որը երկրի ազգային անվտանգության տեսանկյունից խիստ մտահոգիչ է: Արտաքին առևտրում ՀՀ-ն հիմնականում արտահանում է պղնձի հանքաքար և խտանյութ, այլումին, սննդամթերք, խմիչքներ և այլն: Արտա-հանման հետ մեկտեղ ներմուծում է սննդամթերք և խմիչքի լայն տեսականի, հացահատիկ, միս, կարագ, բուսական յուղ, շաքարավազ, բրինձ, մակարոնե-ղեն և այլն: Մեր նպատակն է ուսումնասիրել, վերլուծել և բացահայտել պա-րենային ապրանքների արտաքին առևտրի հիմնախնդիրները և զարգացման այն հեռանկարները, որոնք հնարավոր են Եվրասիական Տնտեսական Միու-թյանը (ԵՏՄ) ՀՀ-ի անդամակցելուց հետո: Այդ իսկ պատճառով հետազոտու-թյան առարկա է հանդիսացել արտաքին առևտուրը, մասնավորապես՝ բնակ-չության կողմից հայցվող հիմնական 23 ապրանքատեսակների 2010-2014թթ ընդհանուր, ինչպես նաև ԵՏՄ անդամ երկրների միջև արտաքին առևտուրը:

Այսպես, 2008թ. վերջից սկիզբ առած տնտեսական ճգնաժամը մեծ վնաս հասցրեց տնտեսությանը, որի արդյունքում 2009թ. ՀՆԱ-ն կրճատվեց 14.1%-ով /3141.6 մլրդ ՀՀ դրամ/, աճեց գործազրկության մակարդակը՝ 18.7%: Հա-ջորդ տարիներին բարելավվեց սոցիալ-տնտեսական վիճակը՝ միաժամանակ նպաստելով տարբեր ճյուղերի զարգացմանը: Ընդ որում, 2010թ. ՀՆԱ-ի աճի տեմպը կազմել է 102.2%, 3462.2 մլրդ ՀՀ դրամ, իսկ 2014թ. այդ ցուցանիշը համապատասխանաբար կազմել է 103.4% և 4525.8 մլրդ ՀՀ դրամ:

<sup>1</sup> Հետազոտությունն իրականացվել է ՀՀ ԿԳՆ ԳՊԿ-ի կողմից տրամադրվող ֆինանսական աջակցության շնորհիվ՝ № SCS 13YR-5B0037 գիտական թեմայի շրջանակներում:

Համաձայն ՀՀ արտաքին առևտրի 2009-2014թթ. վիճակագրական տրվյալների՝ ցուցանիշները տարեց-տարի աճել են և, հարկ է փաստել, որ ցուցանիշների անկում գրանցվել է միայն 2009թ. պայմանավորված տնտեսական ճգնաժամով, որի արդյունքում ՀՀ արտաքին առևտրաշրջանառությունը կրճատվել է 26.5%-ով, կազմելով 4031.3 մլն. ԱՄՆ դոլար, ընդ որում 2010թ. արտաքին առևտրաշրջանառության աճի տեմպը 2009թ. նկատմամբ կազմել է 118.8%: Արտահանման ցուցանիշի աճը 2010թ. արժեքով կազմել է 46.6%, ներմուծման ցուցանիշը արժեքով աճել է 12.9%-ով: Արտահանման և ներմուծման ցուցանիշները 2011թ. նախորդ տարվա նկատմամբ աճել են համապատասխանաբար 28.2%-ով և 10.6%-ով, իսկ արտաքին առևտրաշրջանառությունը աճել է 14.4%-ով: ՀՀ արտաքին առևտրաշրջանառությունը 2012թ. նախորդ տարվա նկատմամբ աճել է 3%-ով, որտեղ արտահանման աճի տեմպը նախորդ տարվա նկատմամբ արժեքով կազմել է 103.4%: Ներմուծման 2012թ. ցուցանիշների համաձայն աճի տեմպը նախորդ տարվա նկատմամբ արժեքով կազմել է 102.8%: ՀՀ ներմուծման գների ինդեքսը 2012թ. կազմել է 108.6%: ՀՀ արտաքին առևտրաշրջանառությունը 2013թ. կազմել է 5864.6 մլն ԱՄՆ դոլար, աճի տեմպը 2012թ. նկատմամբ կազմելով 104%, իսկ 2014թ. այդ ցուցանիշները համապատասխանաբար կազմել են 5920.9 մլն ԱՄՆ դոլար և 101%: Ընդ որում 2013թ. արտահանման և ներմուծման ցուցանիշները գրանցել են աճի միտումներ. աճի տեմպը 2012թ. նկատմամբ կազմել է համապատասխանաբար 107.2% և 105.1%, սակայն 2014թ. արտահանման ցուցանիշը նախորդ տարվա նկատմամբ աճել է 1.9%-ով, իսկ ներմուծման ցուցանիշը նվազել է 1.1%-ով, ՀՀ ներմուծման գների ինդեքսը 2013թ. կազմել է 103.2%, իսկ 2014թ.՝ 97.6%, արտահանմանը կազմել է համապատասխանաբար՝ 99.7% և 96.9%: Ներկայումս ՀՀ արտաքին առևտրի հաշվեկշիռը բացասական է, քանի որ ներմուծման ծավալը գերազանցում է արտահանման ծավալը (2014թ.՝ 2.9 անգամ), ինչը բացասաբար է ազդում երկրի ՀՆԱ-ի և տնտեսական անվտանգության վրա:

Ներկայացնենք ՀՀ պարենային ապրանքների արտաքին առևտրի 2010-2014թթ. ցուցանիշները (տե՛ս աղյուսակ 1 ) և վերլուծենք դրանք: Այսպես, արտահանման ցուցանիշների համաձայն, հիմնական ապրանքատեսակը, որը արտահանվում է ՀՀ-ից, սուրճն է, այլ կերպ պահածոյացված մրգերը (մրգեր, ընկույզ և այլն պատրաստված այլ եղանակով, շաքարով կամ առանց շաքարի), այլ կերպ պահածոյացված բանջարեղենը (բանջարեղեն պատրաստված կամ պահածոյացված այլ կերպ, առանց քացախ կամ քացախաթթվի, ոչ սառեցված) թարմ կամ պաղեցրած ձուկը, սառեցրած ձուկը, պանիրը, որոնց արտահանման ծավալները տարեց տարի ավելացել են: Այսպես, 2014թ. այլ կերպ պահածոյացված մրգեր ապրանքատեսակի արտահանման աճի տեմպը նախորդ տարվա նկատմամբ կազմել է ծավալով 135.7%, ար-

Ժեքով՝ 121.3%, 2013թ. այդ ցուցանիշները համապատասխանաբար կազմել են 151.5% և 127%, ընդ որում, 2014թ. ցուցանիշները 2010թ. նկատմամբ աճել են համապատասխանաբար արժեքով 2.5 և 2.3 անգամ: Միևնույն ժամանակ մրգի կամ բանջարեղենի հյութեր ապրանքատեսակի արտահանման աճի տեմպը 2014թ. համապատասխանաբար կազմել է 146.2% և 127.7%, իսկ 2013թ. համապատասխանաբար՝ 94.7% և 108%, այլ բանջարեղենի պահածոների ապրանքատեսակինը 2014թ. կազմել է 126.1% և 120.9%, 2013թ.՝ 82.7% և 86.8%, ընդ որում 2014թ. արտահանման ցուցանիշները 2010թ. նկատմամբ աճել են համապատասխանաբար 3.6 և 2.6 անգամ: Չուկ թարմ կամ պաղեցրած ապրանքատեսակի արտահանման աճի տեմպը 2014թ. նախորդ տարվա նկատմամբ կազմել է համապատասխանաբար ծավալով 103.7% և 98.1%, իսկ 2013թ. համապատասխանաբար՝ 131.9% և 129%, ընդ որում 2014թ. արտահանման ցուցանիշները 2010թ. նկատմամբ աճել են համապատասխանաբար ծավալով 10 անգամ և արժեքով՝ 8.6 անգամ: Ուսումնասիրելով ՀՀ պարենային ապրանքների ներմուծման ցուցանիշները՝ կարելի է նկատել, որ հիմնական ապրանքատեսակները, որոնք խոշոր ծավալով ներմուծվում են, ցորենն է, շաքարավազը, հավի միսը, բուսական յուղը, տավարի և խոզի միսը: Ներմուծման 2010-2014թթ. ցուցանիշներից կարելի է նկատել, որ վերջին տարիներին ծավալները կրճատվել են, ինչը կարելի է գնահատել դրական: Այսպես, 2014թ. ցորենի ներմուծումը նախորդ տարվա նկատմամբ կրճատվել է ծավալով 3.8%-ով, իսկ արժեքով՝ 7.3%-ով, 2013թ. այդ ցուցանիշները համապատասխանաբար կազմել են 27.7% և 17.1%, ընդ որում, 2014թ. ցուցանիշները 2010թ. նկատմամբ ծավալով կրճատվել են 3.6%-ով, իսկ արժեքով ավելացել՝ 14.8%-ով: Շաքարավազի ներմուծման ցուցանիշները 2014թ. նախորդ տարվա նկատմամբ աճել են ծավալով 25.6%-ով, իսկ արժեքով՝ 12.5%-ով, սակայն 2013թ. ցուցանիշները կրճատվել են համապատասխանաբար 3.2%-ով և 21.2%-ով, ընդ որում, 2014թ. ներմուծման ցուցանիշը 2010թ. նկատմամբ աճել է ծավալով 2.5%-ով, իսկ արժեքով՝ 47.9%-ով: Հավի մսի ներմուծման ցուցանիշները 2014թ. նախորդ տարվա նկատմամբ աճել են ծավալով 0.5%-ով, արժեքով կրճատվել են 4.3%-ով, իսկ 2013թ. ծավալով 5.7%-ով կրճատվել են, արժեքով աճել՝ 13.3%-ով, ընդ որում 2014թ. ծուցանիշները 2010թ. համեմատ ծավալով կրճատվել են 14.9%-ով, արժեքով աճել՝ 10.7%-ով: Բուսական յուղի ներմուծման ցուցանիշները 2014թ. նախորդ տարվա նկատմամբ նվազել են ծավալով 0.4%-ով, արժեքով՝ 18.4%-ով, իսկ 2013թ. ծավալով նվազել են 2.9%-ով, արժեքով աճել՝ 3.9%-ով, ընդ որում, 2014թ. ներմուծման ցուցանիշները 2010թ. նկատմամբ աճել են ծավալով 18.6%-ով, արժեքով՝ 31.6%-ով: Տավարի մսի ներմուծման ցուցանիշները 2014թ. նախորդ տարվա նկատմամբ աճել են ծավալով 0.2%-ով, արժեքով՝ 1.4%-ով, իսկ 2013թ. ցուցանիշները կրճատվել են ծավալով՝ 34.6%-ով, ար-

ժեքով՝ 31.7%-ով, ընդ որում, 2014թ. ցուցանիշները 2010թ. նկատմամբ նվազել են ծավալով՝ 17%-ով, արժեքով՝ 4.2%-ով: Խոզի մսի ներմուծման ցուցանիշները 2014թ. նախորդ տարվա նկատմամբ նվազել են ծավալով՝ 10.9%-ով, արժեքով՝ 8.4%-ով, իսկ 2013թ. ցուցանիշները ծավալով նվազել են 1.5%-ով, արժեքով աճել 3%-ով, ընդ որում, 2014թ. ցուցանիշները 2010թ. նկատմամբ աճել են ծավալով՝ 57.2%-ով, արժեքով՝ 71.6%-ով:

Այժմ հարկ ենք համարում ներկայացնել ԵՏՍ անդամ երկրների միջև ՀՀ պարենային ապրանքների արտաքին առևտրի 2010-2014թթ. ցուցանիշները (տե՛ս աղյուսակ 2) և վերլուծենք դրանք: Համաձայն արտահանման 2014թ. ցուցանիշների, հիմնական տեսականին, որը խոշոր ծավալով արտահանվում է, այլ կերպ պահածոյացված մրգերն են, մրգի կամ բանջարեղենի հյութերը, թարմ ձուկը և այլ բանջարեղենի պահածո: Այսպես, այլ կերպ պահածոյացված մրգեր ապրանքատեսակի արտահանման ցուցանիշները 2014թ. նախորդ տարվա նկատմամբ աճել են ծավալով՝ 74.1%-ով, արժեքով՝ 43.4%-ով, 2013թ. այդ ցուցանիշները համապատասխանաբար կազմել են 66.2% և 34.3%, իսկ 2014թ. ցուցանիշները 2010թ. նկատմամբ աճել են ծավալով՝ 5 և 3.5 անգամ: Մրգի կամ բանջարեղենի հյութեր ապրանքատեսակի արտահանման ցուցանիշները 2014թ. նախորդ տարվա նկատմամբ աճել են ծավալով 74.1%-ով, արժեքով՝ 43.4%-ով, 2013թ. այդ ցուցանիշները ծավալով նվազել են 4.6%-ով, արժեքով աճել՝ 9.8%-ով, իսկ 2014թ. ցուցանիշները 2010թ. նկատմամբ աճել են ծավալով 4.5 և աժեքով 3.9 անգամ: Թարմ ձկան արտահանման ցուցանիշները 2014թ. նախորդ տարվա նկատմամբ աճել են ծավալով 4%-ով, արժեքով նվազել՝ 1.7%-ով, 2013թ. այդ ցուցանիշները աճել են ծավալով 31.8%-ով, արժեքով աճել՝ 28.8%-ով, 2014թ. ցուցանիշները 2010թ. նկատմամբ աճել են ծավալով 10.1 և աժեքով 8.6 անգամ:

Նշենք, որ ԵՏՍ անդամ երկրների արտահանման մասնաբաժինը ՀՀ-ից ընդհանուր արտահանման ցուցանիշներում կազմել են ըստ ծավալի և արժեքի համապատասխանաբար. այլ կերպ պահածոյացված մրգեր՝ 87% և 83.8%, մրգի կամ բանջարեղենի հյութեր՝ 88.4% և 87.3%, թարմ ձուկ՝ 99.9% և 99.9%, այլ բանջարեղենի պահածո՝ 83% և 79.3%:

Համաձայն ներմուծման 2014թ. ցուցանիշների՝ հիմնական տեսականին, որը խոշոր ծավալով ներմուծվում է՝ ցորենն է, բուսական յուղը, մարգարիները, մակարոնեղենը և այլուրն է: Ցորենի ներմուծման ցուցանիշները 2014թ. նախորդ տարվա նկատմամբ աճել են ծավալով 2%-ով, իսկ արժեքով նվազել՝ 1.5%-ով, 2013թ. այդ ցուցանիշները նվազել են համապատասխանաբար 31.3%-ով և 21.3%-ով, իսկ 2014թ. ցուցանիշները 2010թ. նկատմամբ ծավալով նվազել են 1.4%-ով, արժեքով աճել են 16.9%-ով: Բուսական յուղի ներմուծման ցուցանիշները 2014թ. նախորդ տարվա նկատմամբ ծավալով աճել

են 21%-ով, արժեքով նվազել 1.5%-ով, 2013թ. ցուցանիշները աճել են ծավալով՝ 20.4%-ով և արժեքով՝ 20.4%-ով, ընդ որում 2014թ. ցուցանիշները 2010թ. նկատմամբ աճել են ծավալով՝ 84.5%-ով, արժեքով՝ 77.1%-ով: Մարգարինի ներմուծման ցուցանիշը 2014թ. նախորդ տարվա նկատմամբ աճել են ծավալով՝ 23%-ով, արժեքով՝ 10.4%-ով, 2013թ. ցուցանիշներն աճել են ծավալով՝ 25.9%-ով, արժեքով՝ 15.2%-ով, իսկ 2014թ. ցուցանիշները 2010թ. նկատմամբ աճել են ծավալով՝ 3.1 անգամ, արժեքով՝ 2.6 անգամ:

Մակարոնեղենի ներմուծման 2014թ. ցուցանիշները նախորդ տարվա նկատմամբ աճել են ծավալով՝ 36.4%-ով, արժեքով՝ 10.6%-ով, 2013թ. ծուցանիշները աճել են ծավալով՝ 9.6%-ով, արժեքով՝ 7.3%-ով, ընդ որում 2014թ. ցուցանիշները 2010թ. նկատմամբ աճել են ծավալով՝ 67.6%-ով, արժեքով՝ 64.7%-ով: Ալյուրի ներմուծման ցուցանիշները 2014թ. նախորդ տարվա նկատմամբ աճել են ծավալով՝ 3.9 անգամ, արժեքով՝ 2.5 անգամ, 2013թ. այդ ցուցանիշները աճել են ծավալով՝ 3.9%-ով, արժեքով՝ 14.5%-ով, իսկ 2014թ. ցուցանիշները 2010թ. նկատմամբ աճել են ծավալով՝ 11.5 անգամ, արժեքով՝ 10.6 անգամ:

Նշենք, որ ԵՏՄ անդամ երկրների ներմուծման մասնաբաժինը ՀՀ ընդհանուր ներմուծման ցուցանիշներում կազմել են ըստ ծավալի և արժեքի համապատասխանաբար ցորեն՝ 99.3% և 99.3%, բուսական յուղ՝ 75.3% և 77.1%, մարգարին՝ 44.6% և 46.2%, մակարոնեղեն՝ 64.6% և 52.2% և ալյուր՝ 93.4% և 88.9%: Ներկայացված ցուցանիշները վկայում են, որ ՀՀ արտաքին առևտրի հաշվեկշիռը, մասնավորապես՝ պարենային ապրանքների մասով բացասական է, քանի որ ռեսուրսների անբավարարության հանգամանքով պայմանավորված ՀՀ է ներմուծվում պարենային ապրանքներ ինչպես ուղղակի սպառման, այնպես էլ վերամշակման նպատակով, որը լուրջ հիմնախնդիր է պարենային անվտանգության տեսանկյունից: Այս ամենը խոսում է պարենային անվտանգության ոչ բավարար մակարդակի մասին, քանի որ անասնապահության ճյուղը, ինչպես նաև բուսաբուծության ճյուղը դեռևս չեն ապահովում բավարար ռեսուրսներով ինչպես բնակչությանը, այնպես էլ արդյունաբերությանը վերամշակման համար, ինչը խոչընդոտում է նաև երկրի սոցիալ-տնտեսական զարգացմանը:

Այսպես, հարկ է նշել, որ մսի ներմուծումը կապված է անասնապահության ոչ բավարար զարգացված լինելով, քանի որ համաձայն ՀՀ ԱՎԾ տրվյալների 2015թ. հունվարի 1-ի դրությամբ ՀՀ-ում կովերի գլխաքանակը կազմել է 313872, խոզերինը՝ 142432, ընդ որում՝ 2014թ. արտադրվել է 82257 տոննա միս և 5718.3 տոննա մսամթերք, 638.3 մլն հատ ձու, և իրացվել է 163.3 հազար տոննա կենդանի քաշով անասուն և թռչուն: Միևնույն ժամանակ ՀՀ աշնանացան ցորենի ցանքատարածությունները 2014թ. կազմել են

102299 հա, որից ստացվել է 3258381 ցենտներ բերք: Բանջարեղենի պահածոների արտադրության ծավալը 2014թ. կազմել է 4856.3 տոննա, տոմատինը՝ 3409.6 տոննա, մրգահյութինը՝ 20645.2 տոննա, տոմատի հյութինը՝ 461 տոննա: Այսպիսով, 2014թ. արտահանվել է արտադրված բանջարեղենի պահածոների 10%-ը, տոմատի 23%-ը, մրգահյութերի 14%-ը, իսկ 2013թ. համապատասխանաբար՝ 39%-ը, 31%-ը և 11%-ը:

ՀՀ ազգային պարենային հաշվեկշռի 2013թ. ցուցանիշների ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ հիմնական տեսականու մասով պարենային ինքնաբավության մակարդակը՝ Արտադրություն / (Արտադրություն + Ներմուծում - Արտահանում), բարձր է մոտ 90-99%, բացառություն են կազմում. ձորեն՝ 46.8%, տարեկան՝ 69.2%, եգիպտացորեն՝ 20.3%, բրինձ՝ 0%, գլուխ սոխ՝ 86.5%, կաթ՝ 85%, բուսական յուղ՝ 15.1%, տավարի միս՝ 86.2%, խոզի միս՝ 46.3%, թռչնի միս՝ 19.8%: Այտեղ անհրաժեշտ է նաև դիտարկել ներմուծման կախվածության աստիճանը (ներմուծում/արտադրություն+ներմուծում-արտահանում), որը ըստ ապրանքատեսակների հետևյալն է՝ ցորեն՝ 55.8%, տարեկան՝ 30.8%, եգիպտացորեն՝ 79.7%, բրինձ՝ 100%, գլուխ սոխ՝ 14.1%, կաթ՝ 17.3%, բուսական յուղ՝ 84.9%, տավարի միս՝ 14.1%, խոզի միս՝ 55.1%, թռչնի միս՝ 80.7%: Կատարված վերլուծությունը թույլ է տալիս եզրակացնել, որ Հայաստանի Հանրապետության պարենային ապրանքների արտաքին առևտուրը հիմնականում իրականանում է ԵՏՄ անդամ երկրների հետ, հատկապես՝ ՌԴ-ի հետ: Այս առումով կարևոր է նաև ՀՀ-ի անդամակցումը ԵՏՄ-ին, որը հնարավորություն է ընձեռնում անդամ երկրների միջև իրականացնել ազատ առևտուր, միաժամանակ ՀՀ արտադրանքը արտահանել անդամ երկրներ: Այստեղ անհրաժեշտ է նաև համապատասխանեցնել ՀՀ ստանդարտները ԵՏՄ միասնական ստանդարտներին, մասնավորապես մսամթերքի, պահածոների, բնական հյութերի մասով, ինչը կնպաստի արտահանման ծավալների աճին՝ իր հերթին նպաստելով սննդարդյունաբերության ճյուղի զարգացմանը: Անհրաժեշտ է նաև սննդի անվտանգության տեսչության կողմից վերահսկողության վարչարարության խստացումը, մասնավորապես՝ որակական պահանջների համապատասխանեցման առումով: Այսպիսով, պետք է հաշվի առնել այն հանգամանքը, որ ՀՀ-ն, անդամակցելով ԵՏՄ հետ, այսուհետ արտաքին առևտուրը իրականացնելու է հիմնականում ԵՏՄ անդամ երկրների հետ, և այս առումով անհրաժեշտ է լինելու լուծել որոշ կարևորագույն պարենային ապրանքների՝ տավարի և հավի մսի, շաքարավազի, կարագի և այլնի, ներմուծման գործընթացը, քանի որ տվյալ ապրանքատեսակները ներմուծվում էին ԵՄ-ից և այլ երրորդ երկրներից, իսկ տվյալ դեպքում երկուսն էլ հանդիսանում են երրորդ երկրներ, և ԵՏՄ միասնական մաքսային սակագներով կիրառվելու են մաքսազերծման համապատասխան դրույքաչափեր, ինչի արդյունքում կավելանա ներմուծվող ապրանքի արժեքը:

Աղյուսակ 1. ՀՀ պարենամթերքի արտաքին առևտուրը 2010-2014թթ.

		2010թ.			
		Արտահանում		Ներմուծում	
		տոմնա - A	հազար դոլար-B	A	B
1	Տավարի միս	28.2	42.30	6586.5	14698.90
2	Խոզի միս	0.093	0.60	4609.7	10998.00
3	Հավի միս			37503.7	41095.20
4	Չուկ կենդանի	10.8	70.00	0.5345	58.80
5	Չուկ թարմ կամ պաղեցրած	226.1	1926.00	1.3484	2882.00
6	Չուկ սառեցրած	186.5	1862.00	2461.8	2906.80
7	Կարագ	0.044	0.30	3058.5	9304.60
8	Պանիր	496.4	1688.00	725.8	3836.40
9	Սուրճ	1761.9	5648.00	11671.5	25732.10
10	Ցորեն	0	0.00	344660.4	87876.20
11	Բրինձ	13.45	7.00	12618.6	7185.00
12	Այլուր	0	0.00	782.4	317.70
13	Չու հազ. հատ	2700	199.60	4087.7	492.60
14	Բուսական յուղ	0.08	0.20	19505.4	19878.20
15	Մարգարին	0	0.00	12325.4	16861.80
16	Շաքարավազ	2144	1475.00	97752.7	30812.40
17	Մակարոնեղեն	1.5	3.00	3521.5	3306.90
18	Բանջարեղենի պահածո	359.1	640.9	616.7	752.9
19	Լոլիկի մածուկ	269.2	363.6	65.3	73.8
20	Այլ բանջարեղենի պահածո	987.4	1930.2	4110.8	6751
21	Ջեմ, մրգախյուս, մարմ	816.5	1247.7	42.1	139.1
22	Այլ կերպ պահածոյաց. միջոց	1344.3	3829.1	392.9	1103
23	Մրգի կամ բանջարեղ. հյութեր	1155.2	1324.3	4975.6	5905.4
C	Ընդամենը	9800.77	22258.50	567989.18	292968.80
D	<b>Ընդամենը բոլոր տեսակի ապրանք</b>		<b>1041056.6</b>		<b>3748953.5</b>
		2011թ.			
		Արտահանում		Ներմուծում	
		A	B	A	B
1		0	0.00	10968.9	25786.40
2		0.006	0.00	6160.8	14981.60
3		0	0.00	40601.4	49146.30
4		13	101.90	0.215	42.70
5		726	5629.70	2581.145	3399.30
6		566.2	4406.20	2635.2	3529.30
7		0	0.00	4540.2	14444.20
8		439.8	1854.90	1019.2	5594.00
9		1437.7	5329.60	11020.6	27640.20
10		22	4.40	356038.3	90407.50
11		0.145	0.30	10447.2	6465.60
12		0.07	0.00	11769.9	5134.70
13		0	0.00	32928.3	3499.30
14		0.382	0.70	20988	26137.50
15		0	0.00	10412.7	17557.40
16		3434	2739.30	91668.4	53799.20
17		47.9	51.9	4129	4360.3
18		448	845.7	905.7	965.2
19		764.6	826	69.7	181
20		1411.1	2923.3	5619.2	9316.7
21		862.8	1221.6	74.8	183.7
22		1889.7	5814	719	1487.8
23		1805.7	2250.9	4696.2	6786
C		13869.1	34000.4	597065.76	370845.9
D			<b>1334338.8</b>		<b>4145332.0</b>
		2012 թ.			
		Արտահանում		Ներմուծում	
		A	B	A	B
1		0	0.00	8335.4	20347.60
2		0	0.00	8261.5	19999.70
3		16.3	45.70	33634.7	41935.00
4		16.9	194.00	0.5153	27.30
5		1662.8	13047.50	40.2877	350.60
6		164.4	1212.10	2646.8	3433.50
7		0.1	0.30	4907.4	21403.70
8		903.6	2335.40	1056.2	5433.90
9		1346.1	5522.00	10618.7	26336.80
10		0.0012	0.00	477681.2	131112.8
11		0	0.00	10413.2	6573.00
12		0	0.00	1285.8	708.20
13		28.8	2.90	428.3	162.00
14		0	0.00	23942.4	30851.70
15		0.015	0.00	11510.3	18320.00
16		400	296.50	82410.3	51382.40
17		153.5	120.9	4315.4	4503.1
18		704.7	1255.2	827	964.8
19		1072	1211.2	16	21.6
20		2399.1	4256	4254.6	8002.6
21		686.4	1220.2	229.7	335.8
22		2374.1	6552	382.2	828.5
23		2126.1	2670.7	5685.4	6082.2
C		14026.12	39942.60	692455.00	399116.80
D			<b>1380199.2</b>		<b>4261232.7</b>

Աղյուսակ 1-ի շարունակությունը

	2013թ.				2014թ.			
	Արտահանում		Ներմուծում		Արտահանում		Ներմուծում	
	A	B	A	B	A	B	A	B
1	0	0	5453.3	13891.8	0	0	5464.2	14082.5
2	0	0	8136.4	20594.4	0	0	7246.8	18871.6
3	46.5	140.5	31723.6	47519.3	45.4	107.1	31911.4	45495.9
4	24.8	169.8	0.2	20.6	95.9	658	2.3466	45.2
5	2193	16825.9	9.8	78.1	2274.6	16502.3	2.1	39.8
6	55.7	305.9	2142.2	2982.7	0.02	0.3	1777.3	2899.5
7	66.345	374	4749.0	20105.1	120.1	546.3	5262.3	22763.3
8	1541.2	4610.1	1243.7	6758.9	1542.4	4890	1187.9	6313.5
9	1233.9	4813.6	11564.8	25802.1	987	4320.9	10994.3	24828.5
10	0	0	345571.8	108751.3	241.8	133.7	332307.4	100857.5
11	0	0	10271.5	6969.5	0	0	10620.9	6944.7
12	0.77	0.5	896.6	629.3	0	0	2988	1376.5
13	0	0	21160.9	2615.5	0	0	14323.2	1784.9
14	0	0	23239.4	32052.6	0	0	23138.4	26167.2
15	21.564	29.6	12503.3	18817.0	45.1	103.6	13568.4	19636.3
16	899.2	555.4	79774.5	40512.5	200	122.5	100236.3	45561.2
17	155.6	121.8	4825.4	5091.4	128.4	101	5337.6	5043.8
18	461.1	886.8	629.4	853.9	778.2	1439	989.8	1296.5
19	938.6	908.8	72.6	174.6	374.3	538.8	607.7	684.5
20	1984.7	3692.8	4721.9	8807	2502.1	4465.1	4889.2	8772.6
21	967.8	1564.5	313	474.1	997.3	1400.3	251.7	388.2
22	3597.2	8318.6	1465	3658.7	4882.1	10091.4	846.2	2338.2
23	2013.2	2883.2	4429.6	5669.7	2942.3	3683.1	2992.2	4871.4
C	16201.18	46201.80	553736.98	372830.10	18157.02	49103.40	562622.45	361063.30
D		<b>1478736</b>		<b>4488752</b>		<b>1507108</b>		<b>4440073</b>

Աղյուսակ 2. ՀՀ պարենամթերքի արտաքին առևտուրը ԵՏՄ երկրների հետ 2010-2014թթ

	2010թ.				2011թ.			
	Արտահանում		Ներմուծում		Արտահանում		Ներմուծում	
	A	B	A	B	A	B	A	B
1	0.0	0.0	28.3	101.6	0.0	0.0	0.0	0.0
2	0.0	0.0	13.0	45.0	0.0	0.0	20.0	91.2
3	0.0	0.0	8.5	21.4	0.0	0.0	7.0	20.0
4	0.0	0.0	0.0	2.0	1.2	12.0	0.0	3.4
5	225.2	1922.0	0.0	0.0	722.6	5597.0	0.0	0.0
6	181.7	1814.8	20.2	32.8	556.0	4323.5	19.7	22.8
7	0.0	0.0	201.8	982.6	0.0	0.0	174.5	952.2
8	393.5	1181.2	199.2	906.2	368.9	1488.4	218.7	1085.8
9	530.8	1916.4	145.3	1097.8	524.9	2096.1	131.1	1011.4
10	0.0	0.0	336069.2	85686.4	22.0	4.4	274791.9	69915.3
11	0.0	0.0	191.8	210.1	0.0	0.0	432.9	381.7
12	0.0	0.0	243.2	115.3	0.0	0.0	11255.2	4902.4
13	0.0	0.0	31.0	25.0	0.0	0.0	608.2	63.2
14	0.0	0.0	9447.8	11393.2	0.0	0.0	8819.3	13699.1
15	0.0	0.0	1960.8	3481.2	0.0	0.0	2298.0	5204.2
16	0.0	0.0	39.6	56.3	20.0	13.6	21.4	43.5
17	1.3	2.8	2057.9	1598.6	26.6	31.7	2077.9	1939.0
18	164.9	283.0	7.4	18.7	239.3	454.5	2.7	6.5
19	48.5	52.7	0.0	0.0	102.8	151.7	0.2	0.3
20	567.3	1017.2	52.9	125.4	948.8	1867.3	222.2	516.6
21	271.6	466.5	10.1	36.9	200.9	400.2	5.3	23.0
22	843.1	2423.7	77.1	415.1	1419.5	4279.2	190.4	430.0
23	580.8	817.7	1155.4	1106.4	1286.2	1683.4	974.9	987.8
C	3808.7	11898.0	351929.6	107458.0	6439.7	22403.0	301663.2	101299.4



Աղյուսակ 2-ի շարունակությունը

	2012 թ.				2013թ.			
	Արտահանում		Ներմուծում		Արտահանում		Ներմուծում	
	A	B	A	B	A	B	A	B
1	0.0	0.0	4.0	19.2	0.0	0.0	1.9	9.8
2	0.0	0.0	0.0	0.0	0.0	0.0	0.0	0.0
3	0.0	0.0	19.2	45.8	0.0	0.0	309.4	826.5
4	0.0	0.0	0.0	4.5	3.0	22.5	0.0	0.3
5	1659.7	13019.0	0.3	4.7	2187.2	16773.9	0.2	0.8
6	163.2	1205.2	15.0	34.8	29.2	252.6	11.9	22.6
7	0.0	0.0	237.1	1072.0	66.3	373.7	85.4	446.2
8	859.4	2113.1	164.5	804.3	1534.1	4574.7	187.4	900.4
9	575.6	2406.3	94.5	735.3	574.3	2372.7	72.9	555.6
10	0.0	0.0	471014.5	129167.2	0.0	0.0	323489.1	101603.4
11	0.0	0.0	591.1	454.4	0.0	0.0	383.5	292.9
12	0.0	0.0	693.2	425.1	0.0	0.0	720.3	486.9
13	0.0	0.0	2.6	4.3	0.0	0.0	4.8	247.5
14	0.0	0.0	11961.4	17290.5	0.0	0.0	14398.4	20817.9
15	0.0	0.0	3911.2	7131.4	0.0	0.0	4923.8	8217.6
16	0.0	0.0	15.3	27.5	0.0	0.0	27.1	40.8
17	0.0	0.0	2307.2	2218.9	21.3	31.0	2529.4	2380.5
18	619.5	1079.6	8.1	17.4	356.9	682.1	5.0	14.7
19	423.6	477.0	0.7	0.9	343.5	337.7	0.3	0.5
20	1919.0	3172.7	265.5	1027.9	1478.3	2634.5	473.7	1681.4
21	389.2	676.4	1.9	9.2	665.4	999.8	9.4	29.9
22	1855.7	5068.9	4.0	21.5	3084.9	6809.0	1155.2	2881.7
23	1566.3	2041.5	796.6	854.5	1494.5	2241.9	613.7	794.6
C	10031.2	31259.7	492105.4	161371.3	11838.9	38106.1	349398.1	142252.5
2014թ.								
	Արտահանում		Ներմուծում					
	A	B	A	B				
1	0.0	0.0	0.0	0.0				
2	0.0	0.0	0.0	0.0				
3	0.0	0.0	358.5	631.4				
4	79.9	533.8	0.0	1.5				
5	2273.6	16495.6	0.0	0.2				
6	0.0	0.0	38.0	13.4				
7	120.0	546.0	7.6	49.8				
8	1540.8	4878.5	251.3	1107.0				
9	538.8	2611.4	99.1	758.6				
10	0.1	0.0	330008.1	100127.4				
11	0.0	0.0	496.0	468.0				
12	0.0	0.0	2791.9	1224.4				
13	0.0	0.0	912.2	100.8				
14	0.0	0.0	17428.0	20177.2				
15	21.0	73.5	6055.6	9073.2				
16	1.0	0.0	39.2	43.2				
17	15.0	26.7	3449.1	2633.4				
18	670.8	1224.4	13.9	27.9				
19	212.4	310.0	4.2	6.7				
20	2075.6	3542.0	500.5	2019.5				
21	620.0	927.4	17.5	62.0				
22	4247.2	8455.6	508.5	1258.5				
23	2601.9	3214.5	686.5	683.6				
C	15018.0	42839.4	362753.6	140467.7				

Մեր կարծիքով, ՀՀ կառավարությունը պետք է անի հնարավորինը տվյալ գործընթացում ներմուծման զրոյակական դրույքաչափի կիրառման արտոնությունների մասով, ինչը հնարավորություն կընձեռնի լուծել տվյալ պարենի մասով ապահովության հարցը: Հաշվի առնելով կատարված հետազոտությունը՝ պետք է փաստել, որ դեռևս լուծված չէ պարենային անվտանգության հիմնախնդիրը, մասնավորապես՝ ամենից շատ հայցվող պարենի տեսականու

սեփական ռեսուրսներով ապահովման առումով, սակայն ԵԱՏՄ-ն թույլ է տալիս ավելացնել արտահանման ծավալները, բարելավելու արտաքին առևտրի հաշվեկշիռը և արագացնելու սոցիալ-տնտեսական զարգացմանը:

**Լևոն ԽԱՉԱՏՐՅԱՆ**

**Պարենային ապրանքների արտաքին առևտուրը և և զարգացման հեռանկարները**

*Բանալի բառեր. արտահանում, ներմուծում, պարեն, առևտուր*

Արտաքին առևտուրը համարվում է ցանկացած երկրի տնտեսության զարգացման ապահովման կարևորագույն գործընթացը: ՀՀ-ն արտաքին ակտիվ հիմնականում արտահանում է վերամշակված պարենամթերք, մասնավորապես՝ բանջարեղենի պահածոներ, մրգահյութեր, պանիր և այլն, միաժամանակ ներմուծում է միս, ցորեն, բուսական յուղ, շաքարավազ և այլն: Հողվածը նվիրված է ՀՀ պարենային ապրանքների արտաքին առևտրի, ինչպես նաև ԵՏՄ անդամ երկրների հետ ՀՀ արտաքին առևտրի վիճակագրական ցուցանիշների վերլուծությանը և առկա հիմնախնդիրների բացահայտմանը:

**Левон ХАЧАТРЯН**

**ВНЕШНЯЯ ТОРГОВЛЯ ПРОДОВОЛЬСТВИЙ РА И ПЕРСПЕКТИВЫ РАЗВИТИЯ**

*Ключевые слова: экспорт, импорт, продовольствие, торговля, торговооборот*

Внешняя торговля имеет важное значение для процесса экономического развития любой страны. РА во внешнем торговле экспортирует в основном обработанные пищевые продукты, в частности, консервированные овощи, фруктовые соки, сыр, и т.д., в то время как импортирует мясо, зерно, растительное масло, сахар и т.д. Статья посвящена анализу статистических показателей внешней торговли Армении в пищевых продуктах, а также внешней торговли со странами Евразийского Экономического Союза и изучению существующих проблем.

**Levon KHACHATRYAN**

**RA FOOD FOREIGN TRADE AND ITS DEVELOPMENT**

*Keywords: export, import, food, trade, trade turnover*

Foreign trade is essential part of the process of economic development of any country. This is particularly important in terms of trade in food products. RA in the foreign trade activity mainly exports processed foods, in particular, canned vegetables, fruit juice, cheese, etc., whereas import meat, grain, vegetable oil, sugar, etc. The article analyzes the statistics of foreign trade in food products in Armenia, as well as foreign trade with the countries of the Eurasian Economic Union as well as analyzes the existing problems.